# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԲԸԱՀԾՁԲ-6-11 ծածկագրով ընթացակարգի արդյունքում 2015թ-ի օգոստոսի 20-ին կնքված N ԲԸԱՀԾՁԲ-6-11-3 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի օգոստոսի 28-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Չնախատեսված հանգամանքների առաջացման հետևանքով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից Հավելված N 1-ի 9-րդ տողով նախատեսված Երևան-Մոսկավ (մեծահասակ) ուղղությամբ թվով 8 ավիատոմսերից մեկի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն և որպես մեկնման օր սահմանել 12.09.2015թ՝ 30.08.2015թ.-ի փոխարեն:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.3 կետը: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Հավաստում ենք, որ տեխնիկական բնութագրի փոխարինումը հանգեցնում է Պայմանագրի արդյունավետ իրականացմանը, բացի այդ, սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 60-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ա. Մաղաքյանին:


**Հեռախոս՝ <u>010-66-24-94:</u>**

**Էլ. փոստ՝ a.maghaqyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ԲԸԱՀԾՁԲ-6-11-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **28.08.2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արմենիա Թրավել +Մ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 20.08.2015թ. կնքված N ԲԸԱՀԾՁԲ-6-11-3 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից Հավելված N 1-ի 9-րդ տողով նախատեսված Երևան-Մոսկվա (մեծահասակ) ուղղությամբ թվով 8 ավիատոմսերից մեկի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն և որպես մեկնման օր սահմանել 12.09.2015թ՝ 30.08.2015թ.-ի փոխարեն:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արմենիա Թրավել +Մ» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան, Վարդանանց 4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 160 480 732 41300 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 00030747 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |